Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 11-ի N 731 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց ծառայողական զենք տրամադրվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից (այսուհետ՝ ոստիկանություն)՝ պաշտոնավարման ժամանակահատվածի համար ինքնապաշտպանության նպատակով:

2. Ծառայողական զենքը տրամադրվում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց աշխատակազմի ղեկավարի դիմումի հիման վրա, որին կցվում են զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների, զենքի գործադրման ուսուցում անցած լինելու վերաբերյալ տեղեկանք, ինչպես նաև զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին բժշկական եզրակացություն: Սույն կետում նշված դիմումը քննարկվում է 10-օրյա ժամկետում:

3. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների, ինչպես նաև զենքի գործադրման ուսուցումը կազմակերպում է ոստիկանությունը:

4. Ծառայողական զենքը հատուկ պետական պաշտպանության ենթակա անձն ստանում է անձամբ, որի վերաբերյալ կազմվում և ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:

5. Ծառայողական զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքի մասին, որի հետևանքով մարդու կյանքին, առողջությանը կամ սեփականությանը վնաս է պատճառվել, ինչպես նաև ծառայողական զենքը կորցնելու մասին ոչ ուշ, քան 24

ժամվա ընթացքում հատուկ պետական պաշտպանության ենթակա անձի աշխատակազմի ղեկավարը գրավոր տեղեկացնում է ոստիկանությանը:

6. Ծառայողական զենքի հետ կապված թերություններ հայտնաբերելու դեպքում հատուկ պետական պաշտպանության ենթակա անձի աշխատակազմի ղեկավարը 3-օրյա ժամկետում ծառայողական զենքը վերադարձնում է ոստիկանություն՝ հայտնաբերված թերությունները վերացնելու կամ փոխարինելու նպատակով:

7. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձի լիազորությունները դադարելու, օրենքով սահմանված կարգով դադարեցվելու կամ մահվան դեպքերում տրամադրված ծառայողական զենքը հատուկ պետական պաշտպանության ենթակա անձի կողմից կամ աշխատակազմի միջոցով 3-օրյա ժամկետում հանձնվում է ոստիկանությանը, որի վերաբերյալ կազմվում և ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:

8. Պաշտոնավարման ընթացքում հատուկ պետական պաշտպանության ենթակա անձի կողմից ինքնապաշտպանության նպատակով ծառայողական զենք կրելու անհրաժեշտության բացակայության դեպքում տվյալ անձը 3-օրյա ժամկետում զենքը փոխանցում է ոստիկանություն: Ոստիկանությունն ապահովում է ծառայողական զենքի վերադարձը, որի վերաբերյալ կազմվում և ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:

9. Սույն որոշմամբ նախատեսված ժամկետներում ծառայողական զենքը ոստիկանություն չհանձնվելու դեպքում ոստիկանությունն այն վերցնում է անհապաղ՝ կազմելով համապատասխան արձանագրություն (համաձայն N 3 հավելվածի), որի մեկ օրինակը տրամադրվում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձի աշխատակազմին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ